

ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

2020թ. դեկտեմբերի 19

Հարցազրույց Աստղագիտության միջազգային օլիմպիադաների Հայաստանի թիմի ղեկավար, ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատող, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու Մարիետտա Գյուլզադյանի հետ աստղագիտության օլիմպիադաների մասին

✦ Խնդրում եմ մի փոքր ներկայացնել, թե ինչպես սկսվեց օլիմպիական թիմերի հետ Ձեր աշխատանքը:

1996թ-ին ինձ հրավիրեցին դասավանդելու «Աստղագիտություն» ԵՊՀ-ին կից Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ դպրոցում: 1999թ-ն Բյուրականի աստղադիտարանի այժմյան տնօրեն Ա. Միքայելյանի առաջարկով կազմակերպվեց Հայաստանի դպրոցականների օլիմպիադան աստղագիտությունից, որը եղավ շարունակական և արվում է մինչև հիմա: Նշեմ, որ մինչ այդ երկու անգամ փորձ էր արվել, բայց չէր եղել անընդհատ: Առաջին անգամ Հայաստանի ներկայացուցիչները մասնակցեցին Աստղագիտության Միջազգային օլիմպիադային Ավ. Գրիգորյանի ղեկավարությամբ 1997թ-ին:



Այա ֆինանսական դժվարությունների պատճառով երկու տարի ընդմիջվեց: 2000–2004թթ. օլիմպիադայի մասնակցությունը չընդմիջվեց: Այդ ընթացքում Թիմի ղեկավարներ էին Ավետիք Գրիգորյանը, երջանկահիշատակ Արմեն Օսկանյանը և Սերգեյ Ներսիսյանը: Հայաստանի թիմի անդամները այդ տարիների ընթացքում բավականին լավ հանդես եկան՝ վերցնելով 3 I կարգի դիպլոմ, որը համարժեք էր ոսկե մեդալին, 4 II կարգի դիպլոմ՝ համարժեք արծաթե մեդալին և 5 III կարգի դիպլոմ՝ համարժեք բրոնզե մեդալին: 2004 թ. Ղրիմում (Միմեիզ) Աստղագիտության 9-րդ Միջազգային օլիմպիադայի փակումից հետո Հայաստանի թիմը մինչ վերադարձը մնում է հյուրանոցում, որը ծովափին էր (թոնիքը մի երկու օրից պետք է լիներ): Իջնում են ծովափ, և տեղի է ունենում մեծ ողբերգություն: Երեխաները հայտնվում են ալիքների ճիրաններում: Ղեկավարներից մեկը՝ Արմեն Օսկանյանը, որը նաև լավ լողորդ էր, փորձում է փրկել երեխաներին: Օգնության են հասնում նաև այլ լողորդներ: Արդյունքում երեխաներից մեկը՝ Պապոյան Արտակը, և Արմեն Օսկանյանը խեղդվում են: 2005թ-ին Հայաստանի թիմը չմասնակցեց օլիմպիադային, իսկ հաջորդ տարի ինձ առաջարկեցին ղեկավարել Հայաստանի օլիմպիական թիմը: 2006թ-ից մինչ օրս ղեկավարում եմ Հայաստանի օլիմպիական թիմը: Ինձ հետ որպես թիմի ղեկավարներ տարբեր տարիներ եղել են ԵՊՀ դասախոս Էմիլիա Կարապետյանը, ԱՄՏՂ ակումբի նախագահ Ավետիք Գրիգորյանը, նախկին օլիմպիական I կարգի դիպլոմակիր Տիգրան Նազարյանը: Իսկ հիմա ինձ հետ օլիմպիական խմբակը վարում է

իմ նախկին աշակերտ, բազմաթիվ օլիմպիադաների մեդալակիր Վարդգես Մամբրեյանը:

✦ Ի՞նչ դեր ունի աստղագիտության օլիմպիադան կամ առհասարակ ցանկացած օլիմպիադա դպրոցականների համար:

Կամայական օլիմպիական խմբակում խորացվում են այդ առարկայի հետ կապված հարցերը: Երեխաները սովորում են ինքնուրույն աշխատել, ավելի ընդգրկուն մտածել ու պատրաստվել տվյալ բնագավառում փոքրիկ գիտական աշխատանքներ կատարելուն:

Ինչ վերաբերում է աստղագիտության օլիմպիադային, կարծում եմ մեծ է աստղագիտության դերն ու նշանակությունը մարդու, հատկապես պատանիների աշխարհայացքի ձևավորման և զարգացման գործընթացում. ընդլայնվում է նրանց մտահորիզոնը:

Աստղագիտության օլիմպիական խմբակում երեխաները ծանոթանում են ոչ միայն մոլորակների, աստղերի և այլ երկնային մարմինների ու նրանցից կազմված համակարգերի հետ, այլ նաև պատկերացում են կազմում այդ օբյեկտներում ընթացող տարաբնույթ ֆիզիկական երևույթների մասին: Ծանոթանում են այնպիսի մարմինների և միջավայրերի հետ,



որոնք անհնար է ստանալ Երկրի վրա (օր.՝ միլիարդավոր տարիներ գերբարձր ջերմաստիճան ապահովող մարմիններ (աստղերի ընդերք), գերխիտ մարմիններ և այլն): Սովորում են լուծել աստղագիտական խնդիրներ, որոնք ընդգրկում են մոլորակները, հեռավոր աստղերը, գալակտիկաներն ու քվազարները: Օլիմպիադաների կազմակերպման կարևոր կողմերից մեկն էմ համարում մասնակիցների ծանոթացումը հյուրընկալող երկրի մշակութային արժեքներին, նրանց վարք ու բարքին:

✦ Մեր հայ դպրոցականները մասնակցում են աստղագիտական երկու օլիմպիադայի: Որո՞նք են դրանք և ինչո՞վ են տարբերվում:

Սկզբում մասնակցում էին Միջազգային աստղագիտական օլիմպիադային (IAO) (ես վերը նշել եմ այդ մասին), 2007թ-ին անցկացվեց Աստղագիտության ու աստղաֆիզիկայի միջազգային օլիմպիադան (IOAA), որին Հայաստանի թիմը մասնակցում է 2013 թ-ից մինչ այժմ: Իսկ արդեն մի քանի տարի է, ֆինանսների բացակայության պատճառով մենք չենք մասնակցում IAO-ին:

IAO-ն անց է կացվում երկու տարիքային խմբի համար՝ մինչև ա) 15 տարեկան և բ) 15–ից մինչև 18 տարեկան: Քանի որ օլիմպիադան անց է կացվում աշնանը, այդ տարին ավարտած աշակերտները իրավունք չունեն մասնակցելու օլիմպիադային: Օլիմպիադան անց է կացվում երեք փուլով՝ տեսական խնդիրներ, գործնական աշխատանք (այս դեպքում



դիտումներից ստացված տվյալներից որոշվում է օր.՝ տվյալ օբյեկտի հեռավորությունը, ֆիզիկական պայմանները, հատկությունները, քիմիական բաղադրությունը և այլն) և դիտողական փուլ:

IOAA-ն նախատեսված է միայն ավագ տարիքային խմբի համար: Թույլատրվում է այդ տարին

ավարտած, թեկուզ և արդեն ուսանողի մասնակցությունը (մինչև 20 տարեկան): Այս օլիմպիադան ավելի շատ ունի աստղաֆիզիկական ուղղվածություն: Բացի նախորդ օլիմպիադային բնորոշ վերոհիշյալ փուլերից, այստեղ կա նաև թիմային մրցակցություն: Նախկինում ամեն երկիր ներկայանում էր իր թիմով, այժմ այդպես չէ: Թիմերը կազմվում են պատահականորեն ընտրված մասնակիցներից՝ վիճակահանությամբ, ցանկալի է, որ տվյալ խմբում չլինեն նույն երկրի երկու ներկայացուցիչ:

✦ Օլիմպիադաների պատմության մեջ և վերջին տարիների ընթացքում ինչպիսի՞ արդյունքներ են գրանցել Հայաստանը ներկայացնող թիմերը: Խնդրում եմ նշեք առավել մեծ հաջողությունների հասած մեր ներկայացուցիչներին:

Ընդհանուր առմամբ Հայաստանի թիմը նշածս օլիմպիադաները բերել է 10 ոսկե մեդալ, (համեմատության համար ասեմ, որ ֆիզիկայից, որին Հայաստանի թիմը մասնակցում է ավելի երկար ժամանակ, կա 2 ոսկե մեդալ, մաթեմատիկայից և ինֆորմատիկայից՝ մեկական): Ունենք մի քանի տասնյակ արծաթե և բրոնզե մեդալակիրներ: Մեր աշակերտներից երեքը՝ Նազարյան Տիգրանը, Մարտիրոսյան Գևորգը (Քեմբրիջի համալսարանի ասպիրանտ) և Վարդանյան Էդգարը, ոչ միայն ստացել են ոսկե մեդալ, այլ արժանացել են տվյալ տարվա օլիմպիադայում լավագույն արդյունք ցուցաբերողի հատուկ դիպլոմի: Բազմաթիվ են մասնակիցներ արծաթե, բրոնզե մեդալակիրների մեջ, որոնք արժանացել են լավագույն տեսական աշխատանքի, լավագույն դիտողական աշխատանքի և այլ դիպլոմների:

Ուզում եմ նաև նշել, որ 2009թ-ին Չինաստանի Հանջոու քաղաքում անցկացված օլիմպիադայի ժամանակ մեր երեք աշակերտներից երկուսը՝ Հակոբյան Հայկը (հիմա ԱՄՆ-ում Փրինսթոնի համալսարանի ասպիրանտ է «նեյտրոնային աստղեր» թեմայով) և Տեփանյան Հայկը (Սթեյնֆորդի համալսարան) ստացան ոսկե մեդալ, այն դեպքում,

երբ մեկական ոսկե մեդալ ստացան Չինաստանի, Հնդկաստանի և Ռուսաստանի թիմերի ներկայացուցիչները:

- ✦ **Ինչի՞ շնորհիվ են նման փոքրիկ երկրի ներկայացուցիչները հաջող արդյունքներ գրանցում: Հայաստանում որտե՞ղ կան աստղագիտական խմբակներ, որտե՞ղ են պատրաստվում օլիմպիական կադրերը:**

Աստղագիտական խմբակ վարել են Վլադիմիր Հայրապետյանը, ով հիմա ԱՄՆ-ում է, և վերոնշյալ ղեկավարներներից Ավետիք Գրիգորյանը, Արմեն Օսկանյանը, Արարատ Եղիկյանը, Արմեն Գյուլբուդադյանը, Լևոն Արամյանը, ես, երկու տարի՝ Նազարյան Տիգրանը: Խմբակները գործել են «Քվանտ» վարժարանում, մի քանի այլ մասնագիտացված դպրոցներում և 2006թ-ից հետո միայն ֆիզմաթում: Անցյալ տարի պարապմունքներ անցկացրեց Հայկ Աբրահամյանը Ճարտարագիտական համալսարանի ավագ դպրոցում: Օլիմպիադաների անցկացման գործում մեծ ներդրում ունի Աստղագիտության հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ Աշոտ Հակոբյանը, որը ոչ միայն կազմում է դպրոցական, մարզային, հանրապետական և ընտրողական փուլի խնդիրները, այլև շատ օբյեկտիվ է և անաչառ:

Ինչ վերաբերում է հարցի առաջին մասին, ապա, եթե այս հարցը ինձ տայիք մինչ այս պատերազմական անհաջողությունը, վստահ պատասխան ունեի և կտայի, բայց հիմա բազմանշանակ կլռեմ... Պարզապես կցանկանայի շնորհակալություն հայտնել ֆիզմաթ դպրոցի տնօրեն Հայկազ Նավասարդյանին, Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցներին և տնօրինությանը ընդհանրապես, հատկապես Արեգ Միքայելյանին, որոնք ամեն կերպ օգնել և լուծել են բազմաթիվ անլուծելի խնդիրներ: Իսկ Արեգ Միքայելյանի նախաձեռնությամբ ամեն տարի պարգևատրվել են մեր օլիմպիականները:

- ✦ **Դուք հետևո՞ւմ եք օլիմպիադաների մասնակիցների հետագա կարիերային: Նրանցից ո՞ր տոկոսն է դառնում աստղագետ:**

Հիմնականում զիտեմ, ով որտեղ է աշխատում, սովորում ... Աստղագետ դարձել է նրանց երևի թե 7 տոկոսը: Բայց ասեմ, որ գրեթե այս նույն երեխաները մասնակցում են նաև հիմնականում ֆիզիկայի, որոշ դեպքերում մաթեմատիկայի և ինֆորմատիկայի օլիմպիադաներին: Այնպես որ զարմանալի չէ, որ հատկապես այսօր նրանց մեծ մասը զբաղվում է ծրագրավորմամբ, մյուս մասը՝ ֆիզիկայով:

- ✦ **Արդյոք կա՞ն խնդիրներ, որոնց լուծման դեպքում հնարավոր կլինի առավել մեծ բարձունքների հասնել:**

Քանի որ մեր օլիմպիական աշակերտները հիմնականում մեկ կամ երկու դպրոցի աշակերտներ են և մասնակցում են այլ օլիմպիական խմբակներին ևս, ժամանակը չի բավարարում ավելի լիարժեք աշխատելուն:

Շատ նպաստավոր կլինի աստղացուցարանի առկայությունը: Կարծում եմ՝ Երևանում այս տարի բացված աստղացուցարանը կարող է աշակերտների համար ծառայել որպես երկնքի մասին առավել խորը պատկերացում կազմելու միջոց: Մոտ ապագայում կսկսենք համապատասխան պարապմունքները ևս:

Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը